ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 29-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:
Մարզպետն ընդունել է 35 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր քսանինը, աշխատանքի տեղավորման՝ երկու, առողջարանային ուղեգիր հատկացնելու՝ երկու, շենքի տանիքի վերանորոգման և բնակարանի սեփականաշնորհման հարցերով՝ մեկական քաղաքացի:
Դրամական օգնության դիմումներից քսանութին տրվել է դրական լուծում, մեկը՝ ուսումնասիրության ընթացքում է:
Բավարարվել են առողջարանային ուղեգիր հատկացնելու մասին դիմումները, հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին դիմած քաղաքացիները, ընթացքի մեջ են շենքի տանիքի վերանորոգման, բնակարանի սեփականաշնորհման վերաբերյալ դիմումները:



